

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՕՐՀՆԵԱ՝ ՏԷՐ

Ինչքան արագ են անցեր
 Իմ տարիներն, Աստուած իմ,
 Վա՛յ թե կանչես Դուն զիս, Տէր,
 Ինչպէ՞ս ի վեր Քե՛զ նայիմ:

Քու տուածիդ փոխարէն,
 Ի՞նչ մատուցեմ Սեղանիդ,
 Որ Դուն օրհնես երկինքէն,
 Քու մեղաւոր ծառայիդ:

Կ'աղերսեմ ու կ'աղօթեմ, Տէր,
 Զօրացուր անձըս տըկար,
 Շարունակել կարենամ դեռ
 Ծառայութիւնն անկատար:

Քսան եւ հինգ տարիներ,
 Բաւական չեն նուաստիս,
 Գոհացնելու Քեզ, ո՛վ Տէր,
 Տալու ողջ սէրը սրտիս:

Օրհնեա՛ Տէր իմ, օրհնեա՛ Տէր,
 Քահանայիդ այս գիշեր,
 Ինկած հեռու այս ափեր,
 Շընորհէ՛ շատ տարիներ:

Լուծըդ քաղցր է, հանելի,
 Համբերութիւն է պէտք մեզ,
 Նըման յոյսի, հաւատքի,
 Որ չը մոռնանք, Տէր, ըզքեզ:

Արարատըն ի նոյէ,
 Էջմիածինն ի Հօրէ,
 Այր, Բեն, Գիմն ի Մեսրոպէ,
 Երրորդութիւնս, Տէր, պահէ՛:

ԸՆԶԱԿ ՔՀՆՅ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ